**Արձանագրություն N 2**
**«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23-24/89» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի** բացման **և գնահատման նիստի**

ք. Երևան — 05 դեկտեմբեր 2023թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝

Մ.Կարապետյան

անդամներ՝

Լ.Սարգսյան
Լ.Չոբանյան

Գնումները համակարգող քարտուղար՝
Դ.Միերյան

1. «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23-24/89» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2023թ. դեկտեմբերի 05-ին, ժամը 10:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է դեկտեմբերի 06-ին, ժամը 10:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա հակադարձ աճուրդն ավարտվելուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակում:

**«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23-24/89» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան — 07 դեկտեմբեր 2023թ.
ժամը՝ 11:00

6. **«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23-24/89»** ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2023թ. դեկտեմբերի 06-ին, ժամը՝ 10:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| N | Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|---|
| 1 | «ՀԵԼԻՈՆ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Նանսենի փ.,15 շ., 29 բն.հեռ. +374 95543078 |

| | | |
|---|---|---|
| 2 | «ԼԵՅԿՈ» ՍՊԸ | ք. Երևան Ֆուչիկի 27/14 հեռ. +374 098350303 |
| 3 | «Յունիքիմ» ՍՊԸ | ք.Երևան, Արտաշատի խճուղի 11, հեռ. +374 43 49 77 99, +374 11 48 77 99: |
| 4 | «Գրին Վիլիջ» ՍՊԸ | ք. Երևան, Բագրատունյաց 53 շենք, բն.70, հեռ +374 91 95-59-91 |

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Գնման առարկայի նախահաշվային գինը | *Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | «ՀԵԼԻՈՆ» ՍՊԸ | | «ԼԵՅԿՈ» ՍՊԸ | | «Յունիքիմ» ՍՊԸ | | «Գրին Վիլիջ» ՍՊԸ | |
| | | | | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | |
| | | | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | առանց ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | քլորակիր | կգ | 1000 | 650 000 | 530 000 | 636 000 | 750 000 | 900 000 Մերժված | - | - | - | - |
| 2 | Կաուստիկ սոդա | կգ | 1000 | 700 000 | 500 000 | 600 000 | - | - | 308 000 | 369 600 | 488000 | 585 600 |
| 3 | ֆորմալին | կգ | 1000 | 500 000 | 415 000 | 498 000 | 316 666.67 | 380 000 | 500 000 | 600 000 Մերժված | 310 000 | 372 000 |

- **Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն «առանց ԱԱՀ» սյունակը**

9. Համակարգում մերժվել են «ԼԵՅԿՈ» և «Յունիքիմ» ՍՊԸ-ների հայտերը համապատասխանաբար 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով:

10. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ են հանդիսանում.
«ՀԵԼԻՈՆ» ՍՊԸ - 1-ին չափաբաժին,
«Յունիքիմ» ՍՊԸ- 2-րդ չափաբաժին,
«Գրին Վիլիջ» ՍՊԸ-3-րդ չափաբաժին:

11. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտերը համակարգում կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, **բացառությամբ.**

**1. «ՀԵԼԻՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ արտադրողի անվանումը և ֆիրմային անվանումը հստակ չեն, մասնավորապես անհրաժեշտ է հստակեցնել արտադրողի անվանումը և ֆիրմային անվանումը, նշելով նաև իրավական կարգավիճակը, ինչպես նաև հրավերով նախատեսված է, որպեսզի մասնակիցը ներկայացնի ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվություն, ինչը հայտով չի ներկայացվել,**

**2. «Յունիքիմ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը:**

**3. «Գրին Վիլիջ» ՍՊԸ-ի ներկայացված դիմում հայտարարությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ստորագրված չեն հրավերով սահմանված կարգով /անհրաժեշտ է ստորագրել էլեկտրոնային ստորագրությամբ՝ հրավերի 8.11 կետ/: Հայտում բացակայում է ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև մասնակցի հայտով ներկայացվել է՝ «Ֆորմալինը դա ֆորմալդեհիդի 37% ջրային լուծույթն է» այնինչ հրավերով սահմանվել է հետևյալը՝ «Ֆորմալինը դա ֆորմալդեհիդի 40% ջրային լուծույթն է»,**

Վերը նշված պայմանավորված հանձնաժողովը որոշեց, հրավերով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և «ՀԵԼԻՈՆ» «Յունիքիմ» ու «Գրին Վիլիջ» ՍՊԸ-ներին առաջարկել մինչև կասեցման ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

12. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 2023թ. Դեկտեմբերի 11-ին ժամը 12:00, ք. Երևան, Մ.Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակ:

**«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23-24/89» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

11 դեկտեմբեր 2023թ.
ժամը՝ 12:00

13. Հանձնաժողովը արձանագրեց, որ սահմանված ժամկետում «ՀԵԼԻՈՆ», «Յունիքիմ» և «Գրին Վիլիջ» ՍՊԸ-ները շտկել են անհամապատասխանությունները:

14. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, **«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23-24/89»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.
1-ին չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից «ՀԵԼԻՈՆ» ՍՊԸ-ին,
2-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից «Յունիքիմ» ՍՊԸ-ին,
3-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից «Գրին Վիլիջ»:

15. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

16. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հանձնաժողովի նախագահ՝** **Մ.Կարապետյան**

**անդամներ՝**

**Լ.Սարգսյան**

**Լ.Չոբանյան**

**Գնումները համակարգող**

**Քարտուղար՝ Դ.Միերյան**